# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

**Գրիգոր Չոբանյան**
*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Միջազգային հարաբերությունների ամբողջ համակարգում արդեն մի քանի տասնամյակ տեղի են ունենում լրջագույն փոփոխություններ, որոնք լրացուցիչ նախապայմաններ են ստեղծում ինտեգրացիոն միավորումների ստեղծման և զարգացման համար: Առաջանում է տնտեսական, իրավական, տեղեկատվական ավելի կուռ միասնական հարթակի անհրաժեշտություն: Ներկայումս աշխարհում գործում են ավելի քան 291 տարածաշրջանային տնտեսական համաձայնագրեր[1]:

Սակայն մինչ ներկայիս ինտեգրացիոն գործընթացներին անդրադարձ կատարելը հարկ է հասկանալ, թե որոնք էին ինտեգրացիոն գործընթացների նախապայմանները:

Պետությունները, լինելով միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտներ, երկար ժամանակ կարևոր դեր էին խաղում (և շարունակում են խաղալ) միջազգային հարաբերությունների կարգավորման գործում՝ ձևավորելով միջազգային սովորույթներ և կնքելով երկկողմ համաձայնագրեր: Բայց 19-րդ դարի արդյունաբերական հեղափոխությունն էական մարտահրավեր նետեց այս ամենին[2]: Սովորույթները և պայմանագրերն այլևս ի վիճակի չէին կարգավորելու նոր ժամանակաշրջանի առաջադրած խնդիրները, և պետությունները սկսեցին կնքել նոր՝ բազմակողմ պայմանագրեր, ինչն էլ նպաստեց առաջին միջազգային կազմակերպությունների (հայտնի որպես միջազգային ադմինիստրատիվ միավորներ) ձևավորմանը: Սրանք առաջին ոչ քաղաքական բնույթի միջազգային կազմակերպություններն էին («Միջազգային հեռագրական միությունը» (1865թ.), «Համաշխարհային փոստային միությունը» (1874թ.), «Արդյունաբերական սեփականության պահպանության միությունը» (1883թ.), «Մաքսային սակագների հրապարակման միջազգային միությունը» (1890թ.), «Երկաթուղիների միջազգային միությունը» (1886թ.) և այլն):

Միջազգային ադմինիստրատիվ միությունների հիմնումը շատ կարևոր էր միջազգային իրավունքի զարգացման համար, քանզի պետությունները առաջին անգամ, իրացնելով իրենց ինքնիշխան լիազորությունները, ստեղծեցին միջկառավարական միջազգային գործակալություններ[3]: Սա աստիճանաբար հանգեցրեց միջազգային իրավունքում ընդհանուր բնույթի նոր կանոնների ձևավորմանը, որոնք կարգավորում էին միջկառավարական կառույցների գործունեության առանձին ասպեկտները[4]: Արդյունքում միջազգային կազմակերպությունները դարձան ոչ միայն

[1] Տե՛ս Առևտրի համաշխարհային կազմակերպության տվյալների առցանց բազա, հասանելի է՝ (02.02.2019թ.) https://www.wto.org/english/tratop_e/region_e/region_e.htm:

[2] Տե՛ս **Klučka, J., Elbert, Ľ.**: Regionalism and Its Contribution to General International Law. Košice: UPJŠ in Košice, 2015, էջ 13:

[3] Ավելի մանրամասն տե՛ս **Hobza, A.**, U vod do mezinarodní ho pravamí rove ho, Part II. Prague, 1935, էջ 454 – 467:

[4] Քննարկումների արդյունքում միջազգային իրավունքում առաջ եկան նոր հիմնահարցեր, որոնցից շատերը 1970-1980-ականներին դարձան Միջազգային իրավունքի հանձնաժողովի կոդիֆիկացիայի արդյունք:

օգտակար, այլև միջազգային համայնքի և միջազգային իրավունքի ճարտարապետության անփոխարինելի մասը[1]:

Երկրորդ համաշխարհայինից սկսած՝ միջազգային տնտեսական ինտեգրացիան համարվում է ազգային տնտեսության զարգացման կարևորագույն գործոններից մեկը[2]: Պատահական չէ, որ հենց պատերազմից հետո հիմնվեցին այնպիսի մասնագիտացված գործակալություններ, ինչպիսիք են Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) (1945թ.), Արժույթի միջազգային հիմնադրամը (1945թ.), Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (ՎԶՄԲ/IBRD) (1945թ.), Միջազգային քաղաքացիական ավիացիայի ծառայությունը (ICAO) (1947թ.) և այլն: ԱՀԿ-ն դարձավ հենց այն կառույցներից մեկը, որը սկսեց լիազորություններ իրականացնել ազատ առևտրի տարածաշրջանների ու մաքսային միությունների հսկողության ուղղությամբ:

«Ինտեգրացիա» տերմինը (լատիներեն՝ integrationem) նշանակում է մասերի միավորում և ամբողջացում[3], ինչպես նաև փոխազդեցությունների գործընթաց[4]: Սրանից ելնելով՝ միջազգային տնտեսական ինտեգրացիա ասելով հասկանում են մի կողմից՝ միացման գործընթաց, իսկ մյուս կողմից՝ այս գործընթացքում պետությունների փոխազդեցությունը: Ինտեգրացիան ենթադրում է նաև որոշակի փոխհամաձայնության առկայություն, որը համարվում էր ինտեգրացիայի առաջնային պայմաններից մեկը[5]:

Ինտեգրացիան պայմանականորեն կարող է բաժանվել հետևյալ տարբեր տեսակների՝ սոցիալական, քաղաքական, իրավական և տնտեսական: Սոցիալական ինտեգրացիան ներառում է սոցիալական խմբերի միավորում, ինչն իր ազդեցությունն ունի քաղաքական և տնտեսական ինտեգրացիայի վրա[6]:

Իրավական համակարգերի փոխազդեցությունը և փոխներթամանցումը ինտեգրացիոն գործընթացում կարելի է համարել իրավական ինտեգրացիա: Իրավական ինտեգրացիոն գործընթացն ունի բարդ բնույթ և կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ փուլերի. 1) միջազգային իրավական համակարգերի խորացված փոխգործակցություն և համաձայնեցում, 2) ազգային իրավական համակարգերի մերձեցում միջազգայինին՝ ներպետական օրենսդրությունն այդ իրավական համակարգին հարմարեցնելու միջոցով, 3) ազգային իրավական համակարգի ներթափանցումը միջազգային համակարգ[7]:

---

[1]Ներկայումս գոյություն ունեն միջկառավարական տարածաշրջանային և ունիվերսալ ավելի քան 900 կազմակերպություններ:

[2]Տե՛ս **Stefan A. Riesenfeld**, Legal Systems of Regional Economic Integration, 22 Am. J. Comp. L. 415, 1974, էջ 415:

[3]Տե՛ս WEBSTER'S THIRD NEW INTERNATIONAL DICTIONARY 1174 (P. Gove ed. 1967):

[4]Հասանելի է (02.02.2019թ.)՝ https://www.dictionary.com/browse/integration:

[5]Տե՛ս **Siotis**, The Secretariat of the United Nations Economic Commission for Europe and European Economic Integration: The First Ten Years, 19 INT'L ORGANIZATION, 1965, էջ 177, 178:

[6]Տե՛ս **Balassa**, B., The Theory of Economic Integration. Richard D. Irwin. Home-wood, Illinois, 1961, էջ 2:

[7]Զգալի թվով միջազգային կազմակերպություններ, որոնք, մասնավորապես, գործում են միջազգային մասնավոր իրավունքի ոլորտում (Հաագայի կոնֆերանս, ԱՀԿ, ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողով, ՅՈՒՆԿԹԱԴ (անգլ.՝ United Nations Conferenceon Tradeand Development, UNCTAD) և այլն), աշխատում են ի նկատի ունենալ ազգային օրենսդրությունների առանձնահատկությունները՝ օգտագործելով վիճելի իրավիճակներում իրավական վեճերի կոլիզիոն կարգավորումները, որտեղ նյութական նորմերը գերիշխում են, իսկ կոլիզիոն մեթոդները օգտագործվում են խնդիրների լուծման սուբսիդիար մեխանիզմ:

Տնտեսական ինտեգրացիան երբեմն մեկնաբանվում է իբրև միավորում՝ տնտեսական հավասար հնարավորությունների ապահովման համար[1]: Տնտեսական ինտեգրացիան սովորաբար բնութագրվում է որպես միջազգային տնտեսական համակարգում փոխգործակցության մի գործընթաց, որի շրջանակներում կարող են ազատորեն շրջանառվել աշխատանքներ, ծառայություններ, աշխատուժ և կապիտալ[2]: Այն ոչ միայն ապահովում է տնտեսությունների մերձեցումը, այլև տնտեսական խնդիրների համատեղ լուծման համար իրավական մեխանիզմների ստեղծումը: Այսպես, տնտեսական ինտեգրացիան կարելի է արտահայտել հետևյալ տարրերով.

- տարբեր պետությունների ազգային տնտեսությունների միջև համագործակցությունները՝ դրանց ամբողջական կամ մասնակի նույնականացմամբ,
- այդ պետությունների միջև ապրանքների, ծառայությունների, կապիտալի, աշխատուժի շարժի խոչընդոտների վերացմամբ,
- պետություններից յուրաքանչյուրի շուկաների մերձեցմամբ՝ մեկ ընդհանուր շուկա ստեղծելու նպատակով,
- յուրաքանչյուր ազգային տնտեսությունում օտարերկրյա գործընկերների նկատմամբ այս կամ այն խտրականության ձևի բացակայությամբ և այլն[3]:

Միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացն ունի հետևյալ առանձնահատկությունները.

1. ինտեգրացիոն գործընթացն իրականացնում են պետությունները, որոնք շահագրգռված են առավել սերտ համագործակցությամբ, և հետևաբար՝ այն կրում է նպատակային բնույթ,
2. առանձնանում է միջպետական ինստիտուցիոնալ կառույցների ստեղծմամբ, ինչի շնորհիվ անդամ պետություններն իրենց իրավասությունների որոշակի շրջանակ փոխանցում են այդ կառույցներին,
3. լինելով միջպետական գործընթաց՝ այն տրամադրում է միջազգային-իրավական գործիքներ,
4. տնտեսական ոլորտում տրամադրում է ազգային օրենսդրությունների ունիֆիկացիա և համապատասխան իրավական ընդհանուր հարթակի ստեղծումը,
5. որոշակի հարթակի շրջանակներում գործում են ընդհանուր իրավական նորմեր, որոնք կարգավորում են ինտեգրացիոն միավորման անդամ պետությունների տնտեսական գործունեության առանձին ասպեկտներ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով անդրադառնում են ֆիզիկական և իրավաբանական այն անձանց, պետություններին, որոնք ներգրավված են ինտեգրացիոն գործընթացում,
6. տնտեսական ինտեգրացիան հանգեցնում է ինստիտուցիոնալ համակարգի ստեղծման, որը կոչված է միջազգային տնտեսական իրավունքի նորմերի հիման վրա կարգավորելու տնտեսական ոլորտում միջպետական հարաբերությունների մերձեցումը[4],
7. հանդիսանում է երրորդ պետությունների նկատմամբ առևտրատնտեսական, ադմինիստրատիվ և այլ սահմանափակումների իրականացման պատճառ:

---

[1] Տե՛ս **G. Myrdal**, An International Economy, London, 1956, էջ 11:

[2] Տե՛ս **McCarthy**, D., International Economic Integration in Historical Perspective. London: Routledge, 2006, էջ 95:

[3] Տե՛ս **Владимирова И.Г.**, Глобализация мировой экономики: проблемы и последствия, // “Менеджмент в России и за рубежом”. 2001:

[4] Տե՛ս **Рыжов В.Б.**, Международно-правовые модели региональной экономической интеграции (Европейский Союз, МЕРКОСУР, ЕврАзЭС), // «Международное публичное и частное право», 2006, էջ 27:

Հարկ է ընդգծել, որ նշված առանձնահատկությունների աստիճանը փոփոխական է՝ կախված ինտեգրացիոն միավորման բնույթից: Պետությունների տնտեսական համագործակցության ձևերի առանձնահատկությունները արտացոլված են միջազգային պայմանագրերի բովանդակություններում, որոնք հենք են դառնում նշված համագործակցությունների համար: *Միջազգային տնտեսական համագործակցության* պայմանագրերը իրականացնում են կարգավորիչ գործառույթ ոչ միայն միջպետական կապերի, այլև ինտեգրացիոն միության անդամ պետությունների ներտնտեսական գործունեության համար: *Տնտեսական ինտեգրման* մասին պայմանագրերը կարգավորում են միջազգային տնտեսական հարաբերությունները առանձնահատուկ ինստիտուցիոնալ մեխանիզմի՝ տնտեսական ինտեգրացիոն միավորման, հիմնման միջոցով: Դրանով հանդերձ՝ միջազգային ինտեգրման մասին պայմանագիրը, որպես կանոն, հանդես է գալիս որպես հիմնադիր ակտ տվյալ միավորման համար: Եվ սրանով էլ առանձնանում է երկու պայմանագրերի միջև կարևորագույն տարբերություններից մեկը, որոնց միջոցով կազմավորվում են *միջազգային տնտեսական համագործակցությունը և ինտեգրացիոն միավորումը*:

Տնտեսական ինտեգրացիան իրականացվում է երկու ուղղություններով՝ գլոբալիզացման և տարածաշրջայնացման:

Գլոբալիզացիան միջազգային տնտեսության մասնակիցների փոխհարաբերությունների համապարփակ համակարգի ձևավորման գործընթաց է: Իր «Միջազգային կազմակերպությունների իրավաչափությունը» գրքի նախաբանում Վեհիո Հեիսկանեն ներկայացնում է գլոբալիզացիայի հասկացությունը՝ որպես ապագաղութացման, սառը պատերազմի ավարտի, գլոբալ էություն ունեցող տարբեր՝ սոցիալական, միջավայրի և հանրային առողջության տարբեր խնդիրների գիտակցումը, անթիվ-անհամար հասարակական կազմակերպությունների առաջացումը, ինտերնետի տարածումը, գլոբալ տնտեսության փոփոխությունները և լրատվամիջոցների շուկան[1]:

Գլոբալիզացման գործընթացների ակունքներն ունեն խորը պատմական արմատներ: Սակայն հենց քսաներորդ դարավերջում առաջ եկան այնպիսի ծավալներով գլոբալ խնդիրներ, որոնց անհնարին էր երկարաժամկետ լուծում տալ տվյալ ժամանակաշրջանին հատուկ ազգային-պետական սահմանափակ մեխանիզմներով:

Հայտնի են գլոբալիզացիոն գործընթացների ազդեցության տակ ստեղծված ինստիտուտներ, որոնք ուղղված են ունիվերսալ մակարդակում կարգավորիչ գործառույթներ իրականացնելու: Դրանք են՝ ՄԱԿ-ը, Բրետոն Վուդի հաստատությունները, որոնք զբաղված են գլոբալ ֆինանսական խնդիրների լուծմամբ, «Մեծ ությակ»-ը, ավելի ուշ՝ «Քսանյակը», որոնցում պետությունները միավորվել են՝ կրիտիկական գլոբալ խնդիրների կառավարումը համակարգելու համար: Միևնույն ժամանակ, այս կազմավորումները շատ դեպքերում չեն կարող պետությունների համար պարտադիր որոշումներ կայացնել և ի զորու չեն ղեկավարել գլոբալ գործընթացները թե՛ իրավական և թե՛ ոչ իրավական մեխանիզմների միջոցով[2]:

Գլոբալիզացիոն գործընթացների արդյունքում, սակայն, մեկ տնտեսական և քաղաքական համակարգ ստեղծելու փոխարեն երբեմն առանձնացվում և բևեռացվում են մայրցամաքներ[3]: Այս համատեքստում կարծիքներ են հնչում, որ գլոբալի-

---

[1] Տե՛ս **J. M. Coicaud & V. Heiskanen**, The Legitimacy of International Organizations, UNUP, 2001, էջ lff.

[2] Տե՛ս **Aleksandra Piatkowska**, Globalization and the Functioning of International Organizations, 12 Pol. Q. Int'lAff. 58, 2003, էջ 59:

[3] Տե՛ս "Human Development Report 1999. Globalization with a Human Face," Annual Report 2001; "Partnership to Fight Poverty," հասանելի է՝ www.undp.org.execbrd/index.htm:

զացիոն գործընթացներ կարգավորելու համար անհրաժեշտ են վերազգային որոշակի մեխանիզմներ, ինչպիսին կարող է լինել գլոբալ կառավարումը և այլն[1]:

ԱՀԿ-ն իր 1996թ. տարեկան զեկույցում մայրցամաքային ազատ առևտրի համաձայնագրերի վերաբերյալ նշեց հաճախ հանդիպող երկու մտահոգությունները՝ համաշխարհային առևտրային համակարգի մասնատումը և «քաղաքական իմպուլսի անցումը բազմակողմանիությունից ռեգիոնալիզմի»[2]: Ուրուգվայի շրջանի (Uruguay Round) ամփոփումը և 1995թ. ԱՀԿ հիմնումը նաև խթանեցին տնտեսական ռեգիոնալիզմը: Սրան հաջորդող մի շարք իրադարձություններ էլ դրդեցին ԱՄՆ-ին ձևավորելու NAFTA-ն, քանի որ տարածաշրջանային մակարդակում ավելի հեշտ էր գտնել ընդհանուր մոտեցում իրավունքին ու տնտեսական գործունեությանը և ձևավորել կանոններ՝ կառավարելու այլ պետությունների շուկաներ մուտքը[3]:

Ռեգիոնալիզմը կարող է բնութագրվել որպես գլոբալիզմի հակակշիռ: Այն կարող է դիտարկվել որպես մի մեխանիզմ, որը պաշտպանում է և միևնույն ժամանակ հարստացնում է տեղական/ռեգիոնալ ինքնությունը և արժեքը, որը կարող է լուծարվել գլոբալիզացման գործընթացով[4]:

Ռեգիոնալիզմը կարող է միջազգային տնտեսական ինտեգրացման վրա ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական[5] հետևանքներ: Դրական արդյունքներից կարող են լինել, մասնավորապես, փոխճանաչման համաձայնագրերը: Մինչդեռ, ռեգիոնալիզմի խտրական բնույթը կարող է նաև առևտուրը խաթարող հետևանքներ ունենալ:

Պետությունների ինտեգրացիոն փոխհարաբերակցության կարգավորման ոլորտում (սոցիալական և տնտեսական գործոններին զուգընթաց)կարևոր դեր է խաղում ինքնին իրավունքը[6]: Միջազգային իրավունքին տրվում է գերիշխող դեր՝ համակարգելու միջազգային իրավունքի սուբյեկտների վարքագիծը միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում:

Կարելի է առանձնացնել առնվազն չորս մեխանիզմներ, որոնցով միջազգային իրավունքն ակտիվորեն օժանդակում է միջազգային տնտեսական համագործակցության ստեղծմանը: Առաջին, իրավունքը կարող է հիմք ստեղծել կենտրոնացված տնտեսական պլանավորման համար[7]: Երկրորդ, միջազգային իրավունքը կարող է կարգավորել տնտեսական ինտեգրացիան՝ պաշտպանելով նաև ներպետական շահերը[8]: Երրորդ, միջազգային իրավունքը կարող է վերացնել միջազգային առևտրի ներպետական խոչընդոտները[9]: Վերջապես, միջազգային կոմերցիոն իրավուն-

---

[1]Տե՛ս **Joel P. Trachtman**, The Futureof International Law Global Government, Tufts University, The Fletcher School, 2014.

[2]Տե՛ս WTO, Annual Report 1996, Vol. 1 at 141:

[3]Տե՛ս **Rocznik Strategiczny** 2001/2002. – Warszawa: Scholar, 2002, p. 57.

[4]Տե՛ս **Aleksandra Piatkowska**, GlobalizationandtheFunctioning of International Organizations, 12 Pol. Q. Int'l Aff. 58 (2003), էջ 64:

[5]Տե՛ս **Peter Passell**, Trade Pacts by Regions: Not the Elixiras Advertised, Wall St. J., Feb. 4, 1997, at D1:

[6] Տե՛ս **Тихомиров Ю.А.**, Государство на рубеже столетий, Государство и право, 1997, էջ 30:

[7] Տե՛ս **David A. Funk**, From International Laws to International Economic Community Law, 4 Case W. Res. J. Int'l L. 3, 1971, հասանելի է՝ https://scholarlycommons.law.case.edu/jil/vol4/iss1/2, էջ16:

[8] Տե՛ս նույնը:

[9] Տե՛ս **Condliffe, J. B.**, TheCommerceofNations, published by Norton, New York, 1950, էջ 11-131:

քը կարող է զարգացող միջազգային իրավունքում ապահովել լրացուցիչ ընդհանուր կանոններ[1]:

Ինչպես արդեն նշեցինք, միջազգային առևտուրը տնտեսական ինտեգրացիոն գործընթացների կարևորագույն հիմքերից մեկն է, հետևաբար նաև՝ միջազգային իրավունքի զարգացման կարևոր գործոն: Միջազգային առևտուրը ի սկզբանե կարգավորվում էր առևտրի սովորույթներով և որոշակի սկզբունքներով: Առևտրային հարաբերությունների հիմք էին նաև երկկողմ պայմանագրերը: Սակայն դրանք չէին կարգավորվում միջազգային-իրավական այլ մեխանիզմներով:

Անգամ Ազգերի լիգայի հիմնադիր փաստաթղթում անդրադարձ չէր կատարվել տնտեսական և սոցիալական ոլորտներին վերաբերող իրավասություններին: Այնուամենայնիվ, Ազգերի լիգայի դաշնագրի 24-րդ հոդվածը նշում էր, որ միջազգային բոլոր բյուրոները, որոնք հիմնվել են կոլեկտիվ պայմանագրերով, պետք է դրվեն Ազգերի լիգայի ղեկավարման ներքո, եթե այդ պայմանագրի կողմերը համաձայնվել են[2]: Դաշնագրի դրույթները, այնուամենայնիվ, չիրականացվեցին գործնականում, և միջազգային ադմինիստրատիվ միությունները շարունակեցին անկախ գործել մինչև Ազգերի լիգայի գոյության ավարտը:

Ժամանակակից միջազգային տնտեսական իրավունքի ոլորտում կազմակերպությունների հիմքերը դրվեցին 1944թ.-ին Բրետոն-Վուդի համաձայնագրով: Այս համաձայնագիրը բխեց Երկրորդ համաշխարհայինի հետևանքները վերացնելու ցանկությունից և որպես վերջնական նպատակ սահմանեց համաշխարհային նոր տնտեսական կարգի հիմնումը: Բրետոնվուդյան համակարգը կյանքի կոչեց միջազգային տնտեսական իրավունքում մեծ կարևորություն ունեցող երեք միջազգային կազմակերպությունների: Դրանք էին՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ / WTO) (որը ժառանգորդն էր Առևտրի և Սակագների ընդհանուր համաձայնագրի (GATT)), Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ / IMF), Համաշխարհային բանկի խումբը (The World Bank Group):

Միջազգային տնտեսական համագործակցության հիմքը, ըստ էության, դրվեց ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի երրորդ կետում, որը, ի թիվս այլոց, որպես ՄԱԿ-ի նպատակներից մեկը սահմանում է տնտեսական բնույթի միջազգային խնդիրների լուծման համար միջազգային համագործակցության իրականացումը[3]: Պետությունների տնտեսական համագործակցության միջազգային-իրավական կարգավորումը այս համընդհանուր փաստաթղթից սկսեց անցում կատարել դեպի բազմակողմ պայմանագրեր (ունիվերսալ և տարածաշրջանային), ինչպես նաև դեպի ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ միջազգային կազմակերպություններ և դրան զուգահեռ՝ ինտեգրացիոն միավորումներ:

Անդրադառնալով ՄԱԿ-ի կանոնադրությամբ արտացոլված դրույթներին՝ հարկ է մեջբերել կանոնադրության 55-րդ հոդվածը, որտեղ նշվում է, որ Միավորված ազգերի կազմակերպությունը նպաստում է տնտեսական, սոցիալական, առողջապահական և համանման հարցերի լուծմանը[4], և կազմակերպության բոլոր անդամները պարտավորվում են ձեռնարկել համատեղ և ինքնուրույն գործողություններ՝ կազմակերպության հետ համագործակցելով՝ 55-րդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար: Կանոնադրության համաձայն՝ այս նպատակներին հասնելու ճանապարհներից մեկը առանձին միջազգային գործակալությունների հետ համագոր-

---

[1] Տե՛ս **Rbpke**, Economic Order and International Law, 86 Hague Acad. Recueildes Cours, 1954, էջ 203, 218:

[2] The Covenant of the League of Nations, Art.24, հասանելի է՝ http://avalon.law.yale.edu/20th_century/leagcov.asp:

[3] ՄԱԿ-ի կանոնադրություն, հոդված 1, 2-րդ կետ:

[4] ՄԱԿ-ի կանոնադրություն, 55-րդ հոդված:

ծակցությունն է, որտեղ ՄԱԿ-ը ներկայացվում է Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից: ՄԱԿ-ի կանոնադրության 57-րդ հոդվածի համաձայն՝ զանազան մասնագիտացված հաստատությունները, որոնք ստեղծվում են միջկառավարական համաձայնություններով և իրենց հիմնադիր փաստաթղթերում սահմանված միջազգային լայն պարտավորություններ ունեն տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, առողջապահության և համանման ոլորտներում, ՄԱԿ-ի հետ կապի մեջ կմտնեն՝ համաձայն 63-րդ հոդվածի դրույթների[1]:

Բացի ՄԱԿ-ի կանոնադրությունից, տնտեսական համագործակցության ընդհանուր դրույթներն ու սկզբունքներն ամրագրված են, մասնավորապես, միջազգային կազմակերպությունների հետևյալ որոշումներում ու բանաձևերում.

- Միավորված ազգերի կազմակերպության առևտրիեւ զարգացման կոնֆերանսում (UNCTAD) 1964թ.-ին ընդունված միջազգային առևտրային հարաբերությունները և առևտրային քաղաքականությունը սահմանող սկզբունքներում,
- 1974թ. Նոր տնտեսական կարգ սահմանելու մասին հռչակագրում,
- 1974թ. Պետությունների տնտեսական իրավունքների ու պարտականությունների խարտիայում,
- ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985թ. «Միջազգային տնտեսական անվտանգության մասին» բանաձևում:

Առաջին բազմակողմ պայմանագիրը, որը կարգավորում է միջազգային առևտուրը Առևտրի և Սակագների ընդհանուր համաձայնգիրն է (GATT), որում կազմավորվեցին այն սկզբունքները, որոնց հիման վրա կառուցվում են *ազգային, արտոնյալ ռեժիմի և առավել բարենպաստ ռեժիմների* հարաբերությունները ինտեգրացիոն գործընթացում:

Ինտեգրացիոն միավորումների շրջանակներում համագործակցությունը կառուցված է նաև պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող սկզբունքների վրա, որոնք ամրագրված են 1970թ. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում: Չնայած Հռչակագիրը չի կրում պարտադիր բնույթ, սակայն այն ուղղորդիչ է միջազգային իրավունքի սուբյեկտների համար, որոնք իրականացնում են համագործակցություն, այդ թվում՝ տնտեսական ոլորտում:

Տնտեսական ինտեգրացիայի իրավաբանորեն պարտադիր միջազգային-իրավական նորմերը (միության մեջ մտնող պետությունների համար) վերաբերում են տարբեր միավորումների տարածաշրջանային, ինչպես նաև այն պայմանագրերին, որոնք կնքում են այդ միավորումները:

Հռչակագրային, այն է՝ պարտադիր բնույթ չկրող պայմանագրերից հարկ է նշել երկու փաստաթղթեր: Առաջինը 1974թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբեայի ընդունած Պետությունների տնտեսական իրավունքների և պարտավորությունների խարտիան է (այսուհետ՝ Խարտիա), իսկ երկրորդը Միջազգային տնտեսական նոր կարգի սահմանման մասին հռչակագիրը (New International Economic Order (NIEO)) (այսուհետ՝ Հռչակագիր): Միջազգային տնտեսական հարաբերությունների վերաբերյալ դրանցում կիրառվում են այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են «պետությունն իրավունք ունի», «պետությունները պարտավոր են»[2]: Կարելի է ասել, որ չնայած այսպիսի ձևակերպումներին՝ Խարտիան և Հռչակագիրը չդիտարկվեցին որպես պարտադիր բնույթ ունեցող փաստաթղթեր: Այնուամենայնիվ, քննարկվող փաստաթղթերում միջազգային-իրավական սկզբունքների և նորմերի ճնշող մեծամասնությու-

[1] ՄԱԿ-ի կանոնադրություն, 57-րդ հոդված:
[2] Տե՛ս Resolution adopted by the General Assembly 3281 (XXIX). Charterof Economic Rightsand Dutiesof States, հասանելի է՝http://www.un-documents.net/a29r3281.htm:

նը մի կողմից ներկայացնում է միջազգային իրավունքում արդեն գոյություն ունեցող սկզբունքներ և նորմեր, որոնք արտացոլվել են համապատասխան տնտեսական պայմանագրերում և համաձայնագրերում, իսկ մյուս կողմից՝ դրանք հստակեցնում են միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները, որոնք ներառված են ՄԱԿ-ի կանոնադրությունում:

Պետությունների տնտեսական իրավունքների և պարտավորությունների 1974թ. խարտիան յուրահատուկ է ինտեգրացիոն հարաբերությունները կարգավորող միջազգային-իրավական մեխանիզմների համատեքստում: Փաստաթղթի 34 հոդվածներից 24-ը արտացոլում է զարգացող երկրների առանձին իրավունքներ, ինչը չէր կարող չազդել այս փաստաթղթի նկատմամբ այլ պետությունների վերաբերմունքի վրա: Խարտիայի առաջին գլխում ամրագրված սկզբունքների մի մասը դարձավ կոնվենցիոն նորմեր, օրինակ՝ դեպի ծով ելք չունեցող երկրների համար դեպի ծով ազատ մուտքի իրավունքի սկզբունքը դարձավ Ծովային իրավունքի մասին 1982թ. կոնվենցիայի նորմ[1]:

Հարկ է վկայակոչել նաև ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) կառավարման խորհրդի 25.06.1991թ. ընդունած թիվ 91/10 որոշումը, որտեղ անդրադարձ կատարվեց զարգացող երկրների միջև տարածաշրջանային տնտեսական զարգացմանը[2]: Տնտեսական և սոցիալական խորհրդի 26.06.1991թ. ընդունած թիվ 1991/76 բանաձևը կոչ էր անում միջազգային առևտրի աջակցության նպատակով խթանել միջտարածաշրջանային համագործակցությունը[3]: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1991թ. դեկտեմբերի 17-ին ընդունած Զարգացող երկրների միջև տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի թիվ A/RES/46/145 բանաձևում ընդգծվեց սոցիալ-տնտեսական զարգացումների համար զարգացող երկրների միջև ինտեգրացիոն գործընթացների կարևորությունը: Նշվեց, որ զարգացող երկրերի միջև տարածաշրջանային ինտեգրմանը պետք է տրվի առանձնակի ուշադրություն[4]: 1996թ. զեկույցում ԱՀԿ-ը ընդգծեց բաց առևտրի քաքաքականությունների դերը «գլոբալ տնտեսական անկախության սրնթաց առաջխաղացման» գործում[5]:

**Այսպիսով, կարող ենք հանգել հետևյալին.**

- **Միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացներն այլևս դարձել են միջազգային հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից մեկը, որի վկայությունն է այն, որ ներկայումս աշխարհում գործում է ավելի քան 291 տարածաշրջանային տնտեսական համաձայնություններ: Չնայած այս հանգամանքին՝ ներկայումս գոյություն չունի մեկ ունիվերսալ պայմանագիր, որը կստեղծեր տնտեսական համագործակցության իրավական ընդհանուր բազա:**
- **Միջազգային տնտեսական հարաբերությունները նախկինում կարգավորվում էին միջպետական պայմանագրերով և սովորույթներով, սակայն տնտեսական հարաբերությունների զարգացման և արդյունաբերական հեղափոխության շնորհիվ առաջացավ ինստիտուցիոնալ նոր մեխանիզմների ձևավորման անհրաժեշտություն: Սա ինքնին հանգեցրեց միջազգային իրավունքում միջազգային տնտեսական ինտեգրացիոն հարաբերությունների կարգավորման ոլորտի իրավունքի զարգացմանը:**

---

[1] Տե՛ս Ծովային իրավունքի մասին 1982թ. Կոնվենցիա, հոդված 125:

[2] Տե՛ս Governing Council of the United Nations Development Programme decision 91/10, DP/1993/7 (13 May 1993), availableat: http://web.undp.org/execbrd/archives/sessions/gc/40th1993/DP-1993-7.pdf:

[3] Տե՛ս EconomicandSocialCouncilresolution 1991/76, A/46/739 (6 December 1991):

[4] Տե՛ս General Assembly resolution 46/145, Regional economic integration among developing countries, A/RES/46/145 (17 December 1991), availableat: https://www.un.org/documents/ga/res/46/a46r145.htm.

[5] Տե՛ս WTO, Annual Report 1996, vol. 1, էջ 4:

- Քսաներորդ դարի երկրորդ կեսից թափ հավաքող գլոբալիզացիոն գործընթացները հանգեցրին տնտեսական ինտեգրացիոն հարաբերությունների զարգացմանը: Միևնույն ժամանակ, գլոբալիզացիոն գործընթացներն ինքնին չկորոշացան երաշխիք դառնալ ընդհանուր տնտեսական մշակույթի ձևավորման համար, իսկ սա իր հերթին կարևոր պատճառ դարձավ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն գործընթացների համար:
- ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի երրորդ կետը իրավական լուրջ հենք դարձավ միջազգային տնտեսական համագործակցության զարգացման համար:
- Առևտրի և Սակագների ընդհանուր համաձայնգիրը (GATT)՝ որպես միջազգային առևտուրը կարգավորող առաջին բազմակողմ պայմանագիր կարևոր ցուցիչ է միջազգային տնտեսական իրավունքում:
- Միջազգային տնտեսական հարաբերությունների կարգավորման համար ընդունվեցին մի շարք իրավական մեխանիզմներ, որոնք, չնայած իրենց ոչ պարտադիր բնույթին, մեծ նշանակություն ունեցած ոլորտի զարգացման համար: Այս մեխանիզմներից են 1970թ. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրիրը, 1974թ.Պետությունների տնտեսական իրավունքների և պարտավորությունների խարտիան և Նոր միջազգային տնտեսական կարգի սահմանման մասին հռչակագիրը:

# INTERNATIONAL LEGAL BASIS OF INTERNATIONAL ECONOMIC INTEGRATION

**Grigor Chobanyan**
*PhD Student at the YSU Chair of European and International Law*

The article is devoted to the roots of international economic integration. The article addresses the reasons of the development of international economic integration processes and discusses the fundamental legal framework, which caused the further development of international economic cooperation. The author tried to show that several soft law instruments in international economic law had considerable impact on further regulations in international economic relations.

# МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ ОСНОВЫ МЕЖДУНАРОДНОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ

**Григор Чобанян**
*Аспирант кафедры европейского и международного права ЕГУ*

Статья посвящена истокам международной экономической интеграции. В статье рассматриваются причины развития международных экономических интеграционных процессов и обсуждается фундаментальная правовая база, что вызвало дальнейшее развитие международного экономического сотрудничества. Автор попытался показать, что некоторые мягкие правовые инструменты в области международного экономического права оказали значительное влияние на дальнейшее регулирования в международных экономических отношений.

**Բանալի բառեր** – *միջազգային տնտեսական ինտեգրացիա, գլոբալիզացիա, ռեգիոնալիզմ, միջազգային տնտեսական իրավունք, տնտեսական ինտեգրման իրավական հիմք*
**Ключевые слова**: *международная экономическая интеграция, глобализация, регионализм, международное экономическое право, правовые основы экономической интеграции*
**Key words:** *international economic integration, globalization, regionalism, international economic law, legal basis of economic integration*